եւ եղեւ կին Հասանին՝ քեհեայի նորին։ Յայնժամ սպասաւորաց և փոքունցն յորժամ տեսին ի դրունսն քաղաքին և ի գլուխ պարսպացն, բողոք բառնային բառաչմամբ մեծաւ, մինչև լսել բանակին. և զի՞ ա-բասցեն՝ որ էր դրունքն փակեալ, և անդ զսպասաւորսն ևս կալեալ՝ հասեալ սպանին։ Եւ վաղվաղակի զգլուխս մեծամեծացն լցեալ խոտովք առաքեցին յայս կոյս, գրեալ ի վերայ թղթի ի ճակատ մորթոցն անուանք նոցին, որ ի վերոյ բանիս յիշեցաւ, զարմանալի տեսողաց և զեղեալս լսողաց։

Եւ յետ Զ աւուր (23 Փետր. Դշէ) մատնեցին Հոռոմք ի ձեռն հայոյ միոյ կաշառօք. նաեւ ի միաբանիցն Երուսաղէմացոց գրգեալ եղեն Հոռոմք, եւ ետ հայն արգհալ ի ծածուկս։ Եւ լուեալ վէզիրին առաքէ հրաման առ Մուհամէտ աղայ որ քեհեաեէրի՝ թէ Կայ ի քեզ այր մի պահեալ որ սեւագլուխ է և վէքիլ Երուսաղէմի, ըմբռնեալ առ մեզ առաքեսցես թարց պատճառաց։ Եւ գնացեալ ընկերք մուհզուր աղային եւ մտեալ թէպտիլ ի պաղչան յորում նստեալ կայր Վարդապետն, եւ ըմբռնեցին բերին առ վէզիրն։ Եւ տանէր առաջի իւր եւ հարցանէր. Դո՞ւ ես պատրիկն Երուսաղէմի, զի՞նչ էառ որդին Թայարի ի քէն. եւ նա ասէ. Զինչ և ունէի էառ։ Եւ կրկնեալ թէ Զի՞նչ էառ. և նա՝ Զմի անողորմ ի վերայ իմ յարուցեր, զամենայն ինչ ունէի՝ էառ և զվանքն իմ ետ այլոց, եւ կալաւ զիս ընդ իւր ի կապանս թէ Երթամ առ կայսր եւ յայնժամ տաց զվանքն քո ի քեզ. եւ ես տեսի զվատաբախտութիւն նորա և զապստամբութիւն առ արքայ, և երկեայ և ելեալ փախեայ և առ թեւս օճախին բնակեալ։ Եւ վէզիրն ասէ. Դու տվեր և նայ էառ։ Եւ նա ասէ. Ո՛վ տէր, զի տէր էր երկրին այնմ և զիա՛րդ դիմանայի նմա։ Եւ ասէ վէզիրն. Երկրով